ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2-Փ

ք. Երևան «29» մարտի 2020թ.

«Ջրային կոմիտեն», ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջրարբի» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Մ. Պետրոսյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ոռոգման համակարգի առողջացում ծրագրի <<Գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքներ>> միջոցառման շրջանակներում թվով 12 աշխատանքների նախագծային փաստաթղթերի փորձաքննության իրականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2 492 000** (երկու միլիոն չորս հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011034288
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր
կատարող

_____Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ջրարբի» ՍՊԸ
Ք. Երևան, Նանսենի 6, բն.24
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004672461
ՀՎՀՀ 00837681
jrarbi.j@gmail.com
Հեռ. 094-64-31-17
տնօրեն

_____Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՋՐԱՐԲԻ»
«ДЖРАРБИ»
«GRARBI»
00837681

«29» հոկտեմբեր 2020 թ. կնքված
ՁԿ-ԳՀԾՁԲ-20/2-Փ ծածկագրով պայմանագրի

Հավելված N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50531140/32	Ներկայացվում է ստորև	դրամ	195 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
2	50531140/33	Ներկայացվում է ստորև	դրամ	120 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
3	50531140/34	Ներկայացվում է ստորև	դրամ	285 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
4	50531140/35	Ներկայացվում է ստորև	դրամ	80 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
5	50531140/36	Ներկայացվում է ստորև	դրամ	80 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
6	50531140/37	Ներկայացվում է ստորև	դրամ	170 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
7	50531140/38	Ներկայացվում է ստորև	դրամ	217 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
8	50531140/39	Ներկայացվում է ստորև	դրամ	190 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը	Պատվիրատուի կողմից նախագծային

						պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
9	50531140/40	Ներկայացվում է ստորև	դրամ	205 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
10	50531140/41	Ներկայացվում է ստորև	դրամ	450 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
11	50531140/42	Ներկայացվում է ստորև	դրամ	120 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր
12	50531140/43	Ներկայացվում է ստորև	դրամ	380 000	1	նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը պետք է ներկայացվեն Վարդանանց 13ա	Պատվիրատուի կողմից նախագծային փաթեթը տրամնադրվելու օրվանից 10 օր

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ոռոգման համակարգի առողջացում ծրագրի <<Գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքներ>> միջոցառման շրջանակներում թվով 12 աշխատանքների նախագծային փաստաթղթերի փորձաքննության իրականացման ծառայությունների ձեռքբերում

1. **Արաքս գետի ափի ամրացում 11/1 և 11/3 սահմանային նշանների մոտ**

Սահմանային նշանները 11/1 և 11/3 ենթակա են վթարի /11/1 ս/ն գտնվում է ափից 10-15սմ հեռավորության վրա, իսկ 11/3 ս/ն փաստացի տեղափոխվել է ափից 6մ հեռավորության վրա/:

2. **Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի կատարի բարձրացում 5/2, 5/3 և 5/4 սահմանային նշանների հատվածում**

5/2, 5/3 և 5/4 սահմանային նշանների հատվածում Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի բարձրությունը չի ապահովում ջրի անվտանգ անցկացումը հաշվարկային առավելագույն հորիզոնի դեպքում, ողողվում է արգելաթումբը և սպառնում է արգելաթմբի քանդմանը:

3. **Արաքս գետի ափի ամրացում 17/2 սահմանային նշանի մոտ**

17/2 սահմանային նշանի մոտ՝ 150մ հատվածում խախտված է գետի ափը և վտանգ է սպառնում ափապաշտպան արգելաթմբին:

4. **Մեծամոր գետի ափապատնեշի բարձրացում մոտ 800մ երկարությամբ հատվածում,**

Մեծամոր գետի ափով գոյություն ունեցող ափապատնեշի բարձրությունը չի ապահովում ջրի անվտանգ անցկացումը հաշվարկային առավելագույն հորիզոնի դեպքում, ողողվում են գյուղատնտեսական նշանակության

հողատարածքները և տնամերձ հողերը:

5. Մեծամորի հեղեղատարի հունի մաքրում մոտ 1000մ և ափապատնեշի բարձրացում մոտ 150մ երկարությամբ,

Մեծամորի հեղեղատարի հունը մոտ 1000մ հատվածում լցված է բերվածքներով, կենցաղային աղբով: Անհրաժեշտ է նախատեսել հեղեղատարի հունի մաքրում աղբից և բերվածքներից, նախատեսելով ափապատնեշի բարձրացում ջրի հաշվարկային առավելագույն ելքերը անվտանգ անցկացնելու համար, մոտ 150մ երկարությամբ հատվածում, ինչպես նաև տվյալ հատվածում կառուցվածքների ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում նախատեսել անվտանգության և վերականգնման միջոցառումներ:

6. ք.Ապարանի "Քյանդալ" կոչվող սելավատարի մաքրում մոտ 2500մ հատվածում:

"Քյանդալ" կոչվող սելավատարի հունը մոտ 2500մ հատվածում լցված է բերվածքներով, կենցաղային աղբով:

7. Այգեձորի մայր ջրանցքին զուգահեռ հենապատի ամրացում (մոտ 70մ) երկարությամբ

Այգեձորի մայր ջրանցքին զուգահեռ գոյություն ունեցող բետոնե հենապատը քանդվել է, անհրաժեշտ է վերականգնել գոյություն ունեցող բետոնե հենապատի քանդված հատվածը մոտ 70մ երկարությամբ:

8. Գավառագետի հունի մաքրում մոտ 4200մ,

Գավառագետի հունը մոտ 4200մ հատվածում լցված է բերվածքներով, կենցաղային աղբով:

9. *Գետիկ գետի հունի մաքրում շուրջ 1600մ* և ափերի ամրացում *շուրջ 150մ* Ճամբարակ խոշորացված համայնքի Մարտունի գյուղի տարածքում,

Գետիկ գետի հունը մոտ 1600մ հատվածում լցված է բերվածքներով: Հեղեղների պատճառով որոշակի հատվածում գետի հունը փոխվել է, հաճախակի ողողվում են բնակելի տներ և տնամերձ հողեր, գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ:

10. Տանձուտ և Փամբակ գետերի ափապաշտպան հենապատերի վերականգնում մոտ 600մ երկարությամբ հատվածում,

Տանձուտ և Փամբակ գետերի ափապաշտպան հենապատերը հեղեղների պատճառով քանդվել են:

11. Որոտան գետի հունի մաքրում Սիսիան քաղաքի կենտրոնական կամրջից վերև և ներքև մոտ 1400մ հատվածում

Որոտան գետի հունը Սիսիան քաղաքի կենտրոնական կամրջից վերև և ներքև մոտ 1400մ հատվածում լցված է բերվածքներով: Անհրաժեշտ է նախատեսել գետի հունի մաքրում աղբից և բերվածքներից:

12. Նարեկի սելավատարի հունի մաքրում մոտ 3000մ* և ափերի ամրացում *մոտ 400մ

Նարեկի սելավատարի հունը մոտ 3000մ /Նարեկ, Քաղցրաշեն, Այգեզարդ, Այգեպատ գյուղերի հատվածում/ լցված է բերվածքներով, սելավատարի ափերը ողողվել և քանդվել են: Հեղեղների պատճառով հաճախակի ողողվում են ձախ ափին գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, աջ ափին կա ճանապարհի քանդման և բանավանի ողողման վտանգ:

Նախագծային փաստաթղթերի փորձաքննության իրականացման ծառայությունների տեխնիկական բնութագիր

Նշված աշխատանքների իրականացման համար կատարվել են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և փորձաքննության հիմնական նպատակն ընտրված նախագծային լուծումների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանության ապահովումն է: Քաղաքաշինական փաստաթղթերը, մինչև դրանց՝ սահմանված կարգով համաձայնեցումն ու հաստատումը, ենթակա են փորձաքննության:
Փորձաքննությունն իրականացվում է և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:

Նախատեսել.
1. Առաջադրանքի վերջնական նպատակն է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:
Փորձաքննության միջոցով ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված նախագծային լուծումների ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատասխանության ապահովում:
2. Օբյեկտի նախագծային փաթեթի փորձաքննության իրականացման առավելագույն ժամկետը սահմանվում է 5 օրացուցային օր (նախնական եզրակացությունը՝ հայտնաբերված թերություններով): Ժամկետը հաշվարկվում է Պատվիրատուի կողմից Կատարողին փաթեթի տրամադրման և վերջինիս կողմից աշխատանքները հանձն առնելու վերաբերյալ հաստատման օրվանից,
4. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:
5. Կատարողը պարտավոր է հաշվի առնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջները.
Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝
1)նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը.
2)ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները.
3)հիմնական նախագծային լուծումների վերլուծության արդյունքները, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները.
4) ընդունված նախագծային լուծումների վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները, նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները, առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է.
5)փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները.
6)քաղաքաշինական փաստաթուղթը երաշխավորելու կամ այն լրամշակման վերադարձնելու կամ այն մերժելու մասին որոշման հիմնավորումները: Փորձագիտական մարմնի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով:
Բացի այդ, հետևյալ ձևակերպումները
1.Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան,
2.Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին,
3.Նախագիծը երաշխավորվում է դրական եզրակացությամբ՝ ..... հազ.դրամ նախահաշվային արժեքով,
4. Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ցանկը:
Փորձագիտական դրական եզրակացությունը չի կարող պարունակել նախագծային լուծումների վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ կամ նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականներ:
Ամփոփիչ ձևակերպում.

1. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, կամ

2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման, կամ

3 «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական պահանջներին

4. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով;

6 Շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկելու նպատակով անձի հետ կնքվող պայմանագրում նախատեսվում է, որ շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում անձը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011034288
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր
կատարող

_____Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ջրարբի» ՍՊԸ
Ք. Երևան, Նանսենի 6, բն.24
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004672461
ՀՎՀՀ 00837681
jrarbi.j@gmail.com
Հեռ. 094-64-31-17
տնօրեն

----------Մ.ՊԵՏՐՈՍՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

«29» հոկտեմբեր

Հավելված N 2
2020 թ. կնքված
ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2-Փ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/32	փորձաքննության ծառայություններ	195 000	195 000	195 000	195 000	195 000	**195 000**
2	50531140/33	փորձաքննության ծառայություններ	120 000	120 000	120 000	120 000	120 000	**120 000**
3	50531140/34	փորձաքննության ծառայություններ	285 000	285 000	285 000	285 000	285 000	**285 000**
4	50531140/35	փորձաքննության ծառայություններ	80 000	80 000	80 000	80 000	80 000	**80 000**
5	50531140/36	փորձաքննության ծառայություններ	80 000	80 000	80 000	80 000	80 000	**80 000**
6	50531140/37	փորձաքննության ծառայություններ	170 000	170 000	170 000	170 000	170 000	**170 000**

7	50531140/38	փորձաքննության ծառայություններ	217 000	217 000	217 000	217 000	217 000	**217 000**
8	50531140/39	փորձաքննության ծառայություններ	190 000	190 000	190 000	190 000	190 000	**190 000**
9	50531140/40	փորձաքննության ծառայություններ	205 000	205 000	205 000	205 000	205 000	**205 000**
10	50531140/41	փորձաքննության ծառայություններ	450 000	450 000	450 000	450 000	450 000	**450 000**
11	50531140/42	փորձաքննության ծառայություններ	120 000	120 000	120 000	120 000	120 000	**120 000**
12	50531140/43	փորձաքննության ծառայություններ	380 000	380 000	380 000	380 000	380 000	**380 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011034288
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող

Ա. ԱԱՌԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ջրարբի» ՍՊԸ
Ք. Երևան, Նանսենի 6, բն.24
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004672461
ՀՎՀՀ 00837681
jrarbi.j@gmail.com
Հեռ. 094-64-31-17
տնօրեն

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«29» հունվար 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2-Փ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2020 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2020 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«29» հունվար 2020թ. կնքված
ՋԿ-ԳՀԾՁԲ-2072-Փ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2020 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2020 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն